ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2020 թվականի N 166

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Գեղանուշի միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի 2020 թվականի հուլիսի 6-ի գրությունը և Կապան համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 15-ի Ե-06/2702 գրությունը

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 37-ում «Բաղդասարյան Խաչատուր» բառերը փոխարինել «Զախարյան Ժիրայր» բառերով:
2. Խորհրդի անդամ Ժիրայր Զախարյանի լիազորությունների ավարտման ժամկետ սահմանել 2023 թվականի հուլիսի 21-ը:

21.07.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 2005040117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հուլիսի 21

Բ. Կապան